

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝
«Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման
վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին

Ուսումնասիրության իիմքը՝ - ՀՀ վերահսկիչ պալատի 2007 թվականի տարեկան ծրագիրը, «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները:

Ուսումնասիրության նպատակը՝ - «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրության օրյեկտները՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, գանձապետական համակարգ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 01.05.2008թ.-ից մինչև 20.05.2008թ.-ը:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստարդերի հիման վրա՝ «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվություն, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» (այսուհետ՝ Օրենք), «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191-Ն, «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներ, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության թիվ 1851-Ն որոշում, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշում, բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

2007 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներն ու տրանսֆերտները «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել է 490,206,830.6 հազ. դրամ, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191-Ն ՀՀ օրենքով ավելացվել է 24,992,576.8 հազ. դրամով և կազմել 515,199,407.4 հազ. դրամ: 2007 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 35,511,980.8 հազ. դրամով, և դրա արդյունքում՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտների ու տրանսֆերտների (առանց արտաքյուղետային միջոցների) ճշտված ծրագիրը կազմել է 550,711,388.2 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 18 կետի, արտաքյուղետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշիվային և փաստացի ցուցանիշները ներառվում են ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվում են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2007 թվականի պետական հիմնարկների արտաքյուղետային միջոցների հաշիվներում մուտքերը ճշտված ծրագրով կազմել է 13,379,561.24 հազ. դրամ, որից 11,554,190.6 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտներն են, իսկ 1,825,370.64 հազ. դրամը՝ արտաքյուղետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը: Արտաքյուղետային միջոցների հաշիվներում փաստացի մուտք է եղել 13,906,522.10 հազ. դրամի գումար, որից 12,071,042.5 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտներն են, իսկ 1,835,479.6 հազ. դրամը՝ արտաքյուղետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներն ու տրանսֆերտները, առանց արտաքյուղետային միջոցների, փաստացի կազմել է 575,969,374.6 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի նկատմամբ կազմել է 117.5%, ճշտված ծրագրի նկատմամբ՝ 104.59%, իսկ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներն ու տրանսֆերտները, ներառյալ՝ արտաքյուղետային միջոցները, փաստացի կազմել է 588,040,417.1 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 120%-ը, ճշտված ծրագրի՝ 104.58%-ը: 2007 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 18.7% (2006թ.՝ 16.6%, 2005թ.՝ 16.8%):

Օրենքով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 558,677,064.60 հազ. դրամ, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191-Ն ՀՀ օրենքով ավելացվել է 24,992,576.8 հազ. դրամով և կազմել 583,669,641.4 հազ. դրամ: 2007 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 35,960,041.9 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 13,182,615.24 հազ. դրամ արտաքյուղետային միջոցները) կազմել է 632,812,298.6 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված

ծրագիրը (առանց 13,182,615.24 հազ. դրամ, արտաբյուջետային միջոցների) կազմել է 619,629,683.3 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 10,965,448.5 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 634,734,637.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 113.6%-ը, ճշտված ծրագրի՝ 100.3%-ը: 2007 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 20.2% (2006թ.՝ 18.1%, 2005թ.՝ 18.6%):

Օրենքով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 68,470,234.0 հազ. դրամ, որը տարվա ընթացքում մեծացել է 2,076,485.8 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 70,546,719.78 հազար դրամ: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 46,694,220.7 հազ. դրամի պակասուրդ, որը կազմել է Օրենքով նախատեսվածի 68.2%-ը, իսկ տարեկան ճշտված ծրագրով նախատեսվածի 66.19%-ը: 2007 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 1.48% (2006թ.՝ 1.5%, 2005թ.՝ 1.91%):

Ուսումնասիրություններից պարզվել է, որ 2002-2007 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ Օրենքներում կատարված վերլուծության արդյունքում առկա է ՀՀ կառավարությանը փոխանցած լիազորությունների ընդլայնում, որն էլ հնարավորություն է տվել ՀՀ կառավարությանը լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

2007 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2007 թվականին բյուջեի փաստացի եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտները կազմել են 588,040.417.1 հազ. դրամ և 2006 թվականի համեմատ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) աճել են 146,557,281.5 հազ. դրամով կամ 33.2%-ով, իսկ առանց 2007 թվականի արտաբյուջետային եկամուտների, աճը կկազմի 143,862,816.6 հազ. դրամ կամ 33.3%: 2007 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 18.68%, իսկ առանց արտաբյուջետային եկամուտների՝ 18.3% 2006 թվականի 16.3%-ի փոխարեն, այսինքն՝ աճել է 2 տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2007 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների մուտքերը կազմել են 13,906,522.1 հազ. դրամ, որից 1,835,479.6 հազ. դրամը 2007 թվականի արտաբյուջետային եկամուտների տարեսկզբի ազատ մնացորդն է: Ըստ Հաշվետվության, 2007 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների

կառուցվածքում, ընթացիկ եկամուտները կազմել են 92.58%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 92.57%, այդ թվում՝ հարկային եկամուտները համապատասխանաբար՝ 82.25% և 83.77%, պետական տուրքերը՝ 3.72% և 3.72%, ոչ հարկային եկամուտները՝ 6.61% և 5.01%, իսկ կապիտալ գործառնություններից եկամուտները համապատասխանաբար՝ 3.25% և 3.28%, պաշտոնական տրանսֆերտները՝ 4.17% և 4.15%:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի փաստացի ընթացիկ եկամուտների կատարողականը՝ 544,417,261.8 հազ. դրամ, Օրենքով հաստատված եկամուտների նկատմամբ կազմել է 115.6%, ճշտված ծրագրի նկատմամբ՝ 106.2%: Իսկ առանց արտաբյուջետային եկամուտների ՀՀ 2007 թվականի փաստացի ընթացիկ եկամուտները կազմել են 533,170,364.6 հազ. դրամ, որոնք համապատասխանաբար Օրենքով հաստատված ընթացիկ եկամուտների նկատմամբ կազմել են 113.2%, ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 106.3%:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները Օրենքով նախատեսվածից 43,933,443.6 հազ. դրամով (այդ թվում՝ 1,193,474.7 հազ. դրամ արտաբյուջետային հարկային եկամուտներ) կամ 10%-ով ավելի է մուտքագրվել, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 483,676,379.0 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 103.1% կատարում: Իսկ առանց արտաբյուջետային եկամուտների 2007 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 482,482,904.3 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 109.7%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 103.1%: 2007 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 15.4%, նախորդ տարվա 13.6%-ի համեմատ (2005թ.՝ 13.6%):

2007 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 21,858,740.7 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 110.3%, իսկ Օրենքով հաստատվածի նկատմամբ՝ 114.5%:

2007 թվականին պետական բյուջեի կապիտալ գործառնություններից եկամուտները Օրենքով նախատեսվել է 4,071,052.0 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել է ծրագրի ճշգրտում, և Օրենքով հաստատված ցուցանիշը ավելացվել է 16,966,165.5 հազ. դրամով (այդ թվում՝ 240,294.8 հազ. դրամ արտաբյուջետային եկամուտներ) և արդյունքում՝ ճշտված ծրագիրը կազմել է 21,037,217.5 հազ. դրամ, որից 20,727,070.7 հազ. դրամը՝ պետական սեփականություն համարվող հողի վաճառքից մուտքեր: Փաստացի կապիտալ գործառնություններից եկամուտները 2007 թվականին կազմել են 19,122,379.3 հազ. դրամ, (վերջինիս 91.3%-ը պետական սեփականություն համարվող հողի վաճառքից մուտքերն են)

կամ Օրենքով հաստատված ցուցանիշի 436.2%-ը, իսկ ճշտված ծրագրի՝ 84.2%-ը: Առանց 2007 թվականի արտաբյուջետային եկամուտների, կայիտալ գործառնություններից փաստացի եկամուտները կազմել են 18,871,001.7հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 463.5%-ը և ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների)՝ 90.7%-ը:

2007 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 15,126,179.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 28,424,840.6 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 24,500,776.0 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի 162%-ը, ճշտված ծրագրի 86.2%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 23,928,008.3 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 158.2%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 84.3%:

2007 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Հստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 10,965,448.5 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 634,734,637.8 հազ. դրամ, որը Օրենքով սահմանվածի՝ 113.6%-ը, ճշտված ծրագրի 100.3%-ն է:

Հստ Հաշվետվության, 2007 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության ծախսերը կազմել են 10,965,448.5 հազ. դրամ: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների նախատեսված ծախսերը՝ 2,070,000.0 հազ. դրամ, լինելով արտաբյուջետային ծախսեր, Օրենքով նախատեսվել են գործառնական դասակարգմանը ծախսերի 08 խմբի 05 ենթախմբի 08 ծրագրով:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման ծրագրերի ծախսերի (գործառնական դասակարգմանը) ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. ճշտված ծրագրի նկատմամբ փաստացի ծախսերի ֆինանսավորումը գերակատարվել է 1,922,339.2 հազ. դրամով, որը կազմել է ՀՀ պետական բյուջեի 2007 թվականի փաստացի ծախսերի 0.3 %-ը,
2. թվով յոթ ծախսային ծրագրերով կառավարության լիազորությունների շրջանակներում 1,997,827.4 հազ. դրամ գումարի չափով վճարումներ չեն իրականացվել,

3. թվով քսաներկու ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը ճշտված ծրագրի նկատմամբ գերակատարվել են 29,009,575.7 հազ. դրամով, որը բյուջեի փաստացի ծախսերի 4.6%-ն է,
4. թվով քսան ծախսային ծրագրերով փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր: Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 6,166,031.9 հազ. դրամ, մինչդեռ փաստացի կատարողականը կազմել է 2,060,320.3 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 33.4%-ը,
5. 2007 թվականի ընթացքում նախատեսված 279,566.9 հազ. դրամ գումարի չափով հինգ ծախսային ծրագրեր տարեկան ծրագրի ճշտման արդյունքում գրոյացվել են: Մասնավորապես՝ «Աջակցություն գյուղատնտեսական տվյալների հավաքագրմանը» ծրագիրը ինչպես 2007 թվականին, այնպես էլ 2006 թվականին Օրենքով նախատեսվել է 30,000.0 հազ. դրամի չափով, իսկ ճշտված ծրագրով գրոյացվել է:
6. թվով 52 ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով նախատեսվել են 35,081,889.9 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 34,114,899.5 հազ. դրամ,
7. 2007 թվականի Օրենքով, ինչպես նաև ճշտված ծրագրով չի նախատեսվել, բայց իրականացվել է «Նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից մուտքեր» ծրագիրը, որի փաստացին կազմել է՝ 51,133.8 հազ. դրամ:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը (գործառնական դասակարգմամբ) տասնորս խմբերից տասներեքում թերակատարվել է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Տնտեսական այլ ծառայություններ» խմբում՝ 85%: Սիայն «Վառելիքային և էներգետիկ համալիր» խմբում արձանագրվել է ամենաբարձր կատարողականը՝ 542.7%, որը պայմանավորված է 02՝ «Էլեկտրաէներգետիկա» ենթախմբի բարձր կատարողականով՝ 692.1%: Վերջինս էլ պայմանավորված է ենթախմբում ներառված հետևյալ երեք վարկային ծրագրերի բարձր կատարողականով՝

- «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր», որի համար Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսվել էր 182,962.5 հազ. դրամ,

փաստացի կատարվել է 533,890.5 հազ. դրամ, որն էլ կազմել է ճշտված ծրագրի 291.8%-ը,

- «Շապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով Էներգաբլոկի կառուցման ծրագիր», որի համար Օրենքով նախատեսվել էր 12,631,159.8 հազ. դրամ, ճշտված ծրագիրը ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունների արդյունքում կազմել է 2,461,159.8 հազ. դրամ, փաստացի կատարվել է 26,410,780.9 հազ. դրամ, որն էլ կազմել է ճշտված ծրագրի 1073.1%-ը,
- «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վերականգնվող Էներգետիկայի ծրագիր», որի համար Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսվել էր 535,500.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 632,213.6 հազ. դրամ, որն էլ կազմել է ճշտված ծրագրի 118.1%-ը:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի ծախսերի (ներառյալ՝ արտաքյուղետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը տնտեսագիտական դասակարգմանը հետևյալն է. 65.5%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 30.8%-ը՝ կապիտալ, իսկ 3.7%-ը՝ զուտ վարկավորմանը: 2006 թվականին փաստացի ծախսերը (ներառյալ՝ արտաքյուղետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ ընթացիկ ծախսեր՝ 74.1%, կապիտալ ծախսեր՝ 22.2%, զուտ վարկավորում՝ 3.7%:

2006 թվականի համեմատ, ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի ծախսերն աճել են 31.9%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի՝ 16.6%, կապիտալ ծախսերի՝ 83.6% և զուտ վարկավորման՝ 29.9% աճով:

2007 թվականին ընթացիկ ծախսերը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 103.5%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 96.5%-ով: 2007 թվականին ընթացիկ ծախսերի բոլոր հոդվածներով թերակատարում է արձանագրվել: Այդ թվում՝ ցածր կատարողական է արձանագրվել նաև պետական պարտքի սպասարկման բնագավառում: Ներին պարտքի սպասարկման համար ճշտված ծրագրով նախատեսված 7,554,993.3 հազ. դրամի փոխարեն փաստացի վճարվել է 6,566,783.2 հազ. դրամ և թերակատարումը կազմել է Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 1,259,106.3 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի նկատմամբ՝ 988,210.1 հազ. դրամ: Համաձայն Հաշվետվության. «*2007 թվականին պետական պարտատոմսերի սպասարկման փաստացի ծախսերը կազմել են 6.5 մլրդ դրամ, որը ծրագրվածից պակաս է 978.1 մլն դրամով:*

Խնայողությունը պայմանավորված է ՀՀ ԿԲ վերակապիտայիլացիայի նպատակով տրամադրված 12.7 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի փոխարինմամբ անտոկու մուրհակներով, որի հետևանքով նախատեսված 1.2 մլրդ դրամի սպասարկման ծախսի փոխարեն վճարվել է 273.5 մլն դրամ: Մնացած մոտ 50 մլն դրամ խնայողությունը պայմանավորված է մասամբ ծրագրված հետզնումների փոքր-ինչ թերակատարմամբ (տարեսկզբին նախատեսված 11 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի հետզնման դիմաց փաստացի հետ են գնվել 10.8 մլրդ դրամի պարտատոմսեր), մասամբ Էլ՝ կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման ժամկետի աճով», թերակատարումը 978.1 մլն դրամ է, իսկ մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում այն կազմում է 988.2 մլն դրամ: Արտաքին պարտքի սպասարկման (տոկոսավճարի) համար Օրենքով նախատեսված գումարից փաստացի քիչ են վճարել 183,585.6 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրից՝ 8,585.6 հազ. դրամ: Համաձայն Հաշվետվության. «Ինչ վերաբերում է արտաքին պարտքին, ապա այստեղ տնտեսումը (ճշտված ծրագրի համեմատ՝ 8.6 մլն դրամ, սկզբնական ծրագրի համեմատ՝ 183.6 մլն դրամ) հիմնականում պայմանավորված են դրամի արժևորմամբ: 2007 թվականին շարունակվել է բյուջետային ծախսերում պետական պարտքի սպասարկման ծախսերի տեսակարար կշռի անկման միտումը. 2006 թվականի համեմատ նշված ցուցանիշը նվազել է՝ 1.9%-ից հասնելով 1.6 %-ի», բայց վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2007 թվականի հունվարի 5-ին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև կնքվել է Հաշվի սպասարկման մասին թիվ 11/301261 պայմանագիրը, որի 4-րդ հոդվածի 11-րդ կետում նշվում է. «Բյուջետային տարվա ընթացքում արտաքին պարտքի մարումը և ստացումը, տոկոսավճարները, դրամաշնորհները, միջազգային կազմակերպություններին անդամակցության վճարները, միջազգային կազմակերպությունների կապիտալի համալրման նպատակով կատարվող փոխանցումները, դեսպանություններին կատարվող վճարները և սեփականաշնորհման արտաքութային հաշվի բոլոր մուտքերն ու ելքերը փոխարկվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում նախատեսված (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը ուժի մեջ չի մտել, ապա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում նախատեսված) փոխարժեքով, իսկ այլ արտաքույթով փոխարկումները, որոնց փոխարժեքները նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով, իրականացվում են, իհմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում նախատեսված ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ, և նախորդ օրվա դրությամբ փոխարկվող արտաքույթի Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտաքութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը: Պետական բյուջեի այլ

արտարժութային գործառնությունները իրականացվում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան արտարժույթի գնման կամ վաճառքի փոխարժեքով»։ Այսինքն՝ Հաշվետվության մեջ դրամի արժևորման արդյունքում տնտեսման պատճառաբանությունը հիմնավոր չէ։

Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը ճշտված ծրագրի նկատմամբ նույնպես թերակատարվել են 4.5%-ով։

Կապիտալ ծախսերը 2007 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսվել են 135,796,237.4 հազ. դրամ, որը տարվա ընթացքում ճշտվել է և կազմել 179,276,872.2 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել է 195,840,201.18 հազ. դրամով։ 2006 թվականի համեմատ՝ 2007 թվականին կապիտալ ծախսերը աճել են 83.6%-ով, այդ թվում՝ կապիտալ շինարարությանն ուղղվող ծախսերը աճել են մոտ երկու անգամ կամ 190.4%-ով։ 2006 թվականի համեմատ, 2007 թվականին կապիտալ ծախսերի հողվածներում նվազել են՝ «Նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման ծախսերը» 11%-ով և «Ոչ նյութական ակտիվների ձեռք բերման ծախսերը»՝ 38%-ով։

2007 թվականին կատարված ընդամենը ծախսերի 30.85%-ը կապիտալ ծախսերն են, որից 2.2%-ը կատարվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների հաշվին։

2007 թվականին պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմանը) վերլուծության արդյունքում պարզվել է, որ կապիտալ ծախսերի (առանց նպատակային վարկերի և դրամաշնորհների, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի, Մեծ Քրիտանիայի և Հյուսիսային Խոլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների և Լինսի) հիմնական գումարները ուղղվել են՝

1. ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ 27,009,116.1 հազ. դրամ, որից՝ 16,647,317.1 հազ. դրամը ծախսվել է կապիտալ շինարարության վրա,
2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ 18,200,347.7 հազ. դրամ, որից՝ 15,069,221.0 հազ. դրամը ծախսվել է կապիտալ նորոգումների վրա,
3. ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ 16,755,174.0 հազ. դրամ, որից՝ 11,522,830.7 հազ. դրամը ծախսվել է կապիտալ նորոգումների վրա։

2007 թվականին փաստացի ընդամենը ծախսերի 15.9%-ը բաժին է ընկնում ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 101,158,841.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով 105,994,352.8 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 101,215,707.6 հազ. դրամի չափով։ Ճշտված ծրագրի նկատմամբ թերակատարումը պայմանավորված է «Ուազմական կարիքների

բավարարում» ծրագրի թերակատարմամբ՝ 4,624,309.1 հազ. դրամով: 2006 թվականին այս գերատեսչության կողմից կատարված փաստացի ծախսերը կազմել են 79,331,313.0 հազ. դրամ կամ ճշտված ցուցանիշի 99.9%-ը: Այսինքն՝ 2007 թվականին այս ցուցանիշը 2006 թվականի համեմատ աճել է 27.6%-ով:

ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության ծախսերը ամբողջ փաստացի ծախսերի 11.6%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 58,560,896.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 75,708,673,04 հազ. դրամ, որի ավելացումը պայմանավորված է տասնմեկ նոր ծրագրերի՝ 16,954,352.24 հազ. դրամ ավելացմամբ: ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության փաստացի ծախսերը կազմում են 73,659,236.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 125.78%-ը, ճշտված ծրագրի 97.29%-ը:

2007 թվականին ՀՀ Էներգետիկայի նախարարության ծախսերը Օրենքով նախատեսվել է 16,862,257.9 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագիրը կազմել է 5,106,419.9 հազ. դրամ: Ճշտված ծրագրի պակասեցումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի գումարի պակասեցումով՝ 1,830,000.0 հազ. դրամով և ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գումարի պակասեցումով՝ 10,170,000.0 հազ. դրամով: Փաստացի կատարած ծախսերը կազմում են 29,153,391.6 հազ. դրամ, կամ Օրենքով նախատեսվածի՝ 172.89%-ը, ճշտված ծրագրի՝ 570.9%-ը: Գերակատարումը պայմանավորված է հիմնականում ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գերակատարմամբ՝ Օրենքով նախատեսվածի նկատմամբ՝ 109.09%-ով, ճշտված ծրագրի նկատմամբ՝ 973.1%-ով: Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության, այդ գումարը վճարվել է որպես վարկային ծրագրի կանխավճար: 2006 թվականի համեմատ, 2007 թվականին ՀՀ Էներգետիկայի նախարարության փաստացի ծախսերն աճել են 514.3%-ով:

2007 թվականին ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը 90%-ից ցածր է Մարդաբանության կառավարման նախարարության ծախսերի գծով՝ ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 84.1% և Ազգային ժողովի ծախսերի գծով՝ ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 88.25%, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման ծախսերի ճշտված ծրագրի տնտեսմամբ 247,012.13 հազ. դրամով և «Վարչական օրյեկտների հիմնանորոգում» ծրագրի գծով Օրենքով նախատեսված 93,710.0 հազ. դրամ ծախսի չկատարմամբ:

2007 թվականին գերատեսչություններից փաստացի համեմատաբար մեծ ծախս են կատարել ՀՀ առողջապահության նախարարությունը (ամբողջ փաստացի ծախսերի 7.2%-ը՝ 45,849,712.0 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 99.6%-ը և Երևանի քաղաքապետարանը (ամբողջ փաստացի ծախսերի 6.3%-ը՝ 40,297,162.2 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 92.6%-ը: Վերջինիս՝ Օրենքով նախատեսված ծախսերը կազմել են 22,601,371.1 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագիրը՝ 43,507,545,64 հազ. դրամ: Ճշտված ծրագրի աճը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի աճով՝ 15,762,759.7 հազ. դրամով:

2007 թվականին արտարյուջետային միջոցների հաշվին փաստացի ամենամեծ ծախս կատարել են ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունը՝ 5,609,718.3 հազ. դրամ կամ ամբողջ իր կատարած փաստացի ծախսերի՝ 24,939,798.8 հազ. դրամի 22.5%-ը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ 1,306,711.6 հազ. դրամ կամ ամբողջ իր կատարած փաստացի ծախսերի՝ 8,608,033.4 հազ. դրամի 15.2%-ը և ՀՀ կառավարությանն առընթեր մարսային պետական կոմիտեն՝ 2,775,680.8 հազ. դրամ կամ ամբողջ իր կատարած փաստացի ծախսերի՝ 8,449,809.25 հազ. դրամի 32.8%-ը:

2007 թվականին Օրենքով ակնկալվել է ստանալ նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից 744,092.7 հազ. դրամ մուտքեր, ճշտված ծրագրով՝ 789,737.4 հազ. դրամ, իսկ փաստացի ստացվել է 838,005.9 հազ. դրամ: Օրենքով չի նախատեսվել երկու գերատեսչության՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Լինսի» հիմնադրամի ծրագրի շրջանակներում նախորդ բյուջետային տարիներին վարկեր ստացած տնտեսավարող սուբյեկտների կողմից բյուջետային վարկերի վերադարձից մուտքերը, որոնց փաստացի ընդհանուր գումարը կազմել է 96,778.5 հազ. դրամ: Ընդ որում, 2006 թվականին «Լինսի» հիմնադրամի ծրագրի շրջանակներում նախորդ բյուջետային տարիներին վարկեր ստացած տնտեսավարող սուբյեկտների համար Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսվել է 126,000.0 հազ. դրամի մուտք, փաստացի ստացվել է 50,482.3 հազ. դրամ կամ նախատեսվածի միայն 40.1%-ը, իսկ 2005 թվականին նախատեսվել է 1,472,945.3 հազ. դրամ, ստացվել է 17,624.5 հազ. դրամ, կամ նախատեսվածի 1.2%-ը:

«Հանքավան Սպրինգ» ՍՊԸ-ի նախատեսված նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից մուտքերը Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսվել են՝ 35,700.0 հազ. դրամ, որը փաստացի չի ստացվել, իսկ «Տավրոս» ԲԲԸ-ի նախորդ բյուջետային տարիներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձից մուտքերը Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսվել են 6,418,9 հազ. դրամ, փաստացի կազմել են 1,549.3 հազ. դրամ կամ նախատեսվածի 24.1%-ը:

Հաշվետվությունը ներկայացված է դրամարկղային սկզբունքով, այդ իսկ պատճառով Հաշվետվությունում բացակայում է բյուջետային տարում իրականացվող փաստացի ծախսերի (ոչ դրամարկղային) վերաբերյալ տեղեկատվությունը, որը հնարավորություն չի տալիս իրականացնել ֆինանսատնտեսական գործունեության լիարժեք վերլուծություն և գնահատում: 2007 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմամբ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բյուջետային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված որոշ գերատեսչությունների ծրագրերի գծով դրամարկղային ծախսերը փաստացի ծախսերից ավելի են 36,005,468.5 հազ. դրամով, իսկ 9,516,626.91 հազ. դրամի չափով փաստացի դրամարկղային ծախսերը փոքր են փաստացի ծախսերից:

2007 թվականին Օրենքով պետական կարիքների համար բյուջետային տարում նախատեսվել է իրականացնել 193,556,609.6 հազ. դրամի գնումներ: Հաշվետվությունում բացակայում է պետության կարիքների համար բյուջետային տարում իրականացվող գնումների վերաբերյալ հաշվետվություն (ըստ ծրագրերի), որը հնարավորություն կտար իրատեսորեն գնահատել Հայաստանի Հանրապետությունում պետական կարիքների համար իրականացվող գնումների գործընթացը:

2007 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2007 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 46,694,220.7 հազ. դրամ: 2006 թվականի համեմատ, 2007 թվականին պակասուրդի մեծությունը աճել է 17.6%-ով, որը հիմնականում պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների մեծության 116.2%-ով աճի արդյունք է: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների մեծությունը նվազել է 171.7%-ով: ՀՆԱ-ի նկատմամբ 2007 թվականի պակասուրդը կազմում է 1.49% (2006թ.՝ 1.49%, 2005թ.՝ 1.91%):

2007 թվականի պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 68,470,234.0 հազ. դրամով: 2007 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ կառավարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունել է 1606-Ն որոշումը, որի արդյունքում 2007 թվականին Օրենքով հաստատված ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման մեծությունն ավելացվել է 2,076,485.8 հազ. դրամով և կազմել է 70,546,719.8 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 68.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 66.19%:

2007 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 26,910,257.5 հազ. դրամ, բայց 2007 թվականի հուլիսի 3-ին «ՀՀ 2007

թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով և 2007 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ կառավարության 1606-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը ավելացել է համապատասխանաբար՝ 14,400,000.0 հազ. դրամով ու 1,621,176.6 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 42,931,434.1 հազ. դրամ: Փաստացի այս ցուցանիշը կազմել է բացասական՝ 9,747,438.2 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ -36.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ -22.7%: Թերակատարումը պայմանավորված է պետական ներքին շահող փոխառության պարտատոմների պակաս հետզննամբ և 2007 թվականի ազատ մնացորդի միջոցների ավելացմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեի պակասուրդի ազատ մնացորդի միջոցների հաշվին փաստացի ֆինանսավորումը բացասական է՝ 37,119,611.5 հազ. դրամ, որն Օրենքով չի նախատեսվել, իսկ ճշտված ծրագրի դիմաց կազմել է բացասական 227.4%: Վերջինս «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 1606-Ն որոշումով ճշգրտվել է և ճշտված ծրագրով կազմել 16,323,600.7 հազ. դրամ:

2007 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 37,119,611.5 հազ. դրամ, այդ թվում՝

32,275.4 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն,
այդ թվում՝

(10,447.1) մլն դրամ՝ ԿԳ-ում դեպոզիտի փոփոխություն,

3,521.3 մլն դրամ՝ կենսաթոշակային ֆոնդի փոփոխություն,

3,408.8 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

994.6 մլն դրամ՝ արտաքյուջեի փոփոխություն,

(767.8) մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

35,656.6 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

այդ թվում՝

846.1 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

(480.3) մլն դրամ՝ 2007 թվականի տարեսկզբի ազատ մնացորդ,

1,504.3 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաքյուջետային հաշիվների մնացորդի փոփոխություն,

1,376.1 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկդային ծախսերի տարբերություն:

Ոսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ պետական բյուջետային միջոցների 2007 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 54,029.300 մլն դրամ:

2007 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրի փաստացի ֆինանսավորման կատարողականն ունի հետևյալ պատկերը.

- 2007 թվականին պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրներում՝ արտաքին վարկերի ստացման փաստացի ընդհանուր գումարը դրամով արտահայտված՝ $64,517,149.8$ հազ. դրամ է, որը կազմում է Օրենքով նախատեսվածի $152.58\%-ը$, այսինքն՝ ներգրավվել է Օրենքով նախատեսվածից ավելի $22,233,534.3$ հազ. դրամով, իսկ ճշտված ծրագրից ավելի $36,139,843.0$ հազ. դրամով:
- Միջազգային կազմակերպությունների կողմից փաստացի տրամադրվել է $36,622,925.36$ հազ. դրամ, որը կազմում է Օրենքով նախատեսվածի $153.1\%-ը$:
- Օտարերկրյա պետությունների կողմից փաստացի տրամադրվել է՝ $27,894,224.46$ հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի $151.9\%-ը$, որի շեղումը կազմել է $9,531,179.76$ հազ. դրամ:
- Օրենքով նախատեսված 25 վարկային ծրագրերից մեկով՝ «Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման երկրորդ ծրագիր»՝ $384,524.700$ հազ. դրամի նախատեսված գումարները չեն ստացվել:
- Օրենքով նախատեսված 11 վարկային ծրագրով՝ $18,334,398.25$ հազ. դրամ ավելի է ստացվել:
- 2007 թվականին պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրների 13 վարկային ծրագրերով ստացվել է Օրենքով նախատեսված ցուցանիշից $10,289,304.97$ հազ. դրամով պակաս:
- Օրենքով չնախատեսված 7 վարկային ծրագրով միջազգային համաձայնագրերի շրջանակներում ստացվել է $14,572,965.74$ հազ. դրամ: ՀՀ կառավարության կողմից 2007 թվականին Օրենքով չնախատեսված արտաքին վարկերը կազմել են փաստացի ստացվածի $22.6\%-ը$: Այդ վարկերն են՝ «Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ծրագիր», «Աղքատության հաղթահարման աջակցության երրորդ ծրագիր», «Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (լրացուցիչ ֆինանսավորում)», «Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագիր», «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր» (OPEC), «Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր» և «Դատաիրավական բարեփոխումների ծրագիր»:
- 2007 թվականին Օրենքով նախատեսվել է 18 վարկային ծրագրի գծով մարել $6,078,639.0$ հազ. դրամ և փաստացի մարվել է $6,044,825.89$ հազ. դրամ: Մեկ

վարկային ծրագրի՝ «Լինսի հիմնադրամի վարկային ծրագիր» գծով մարումը Օրենքով չի նախատեսվել, բայց փաստացի մարվել է 38,396.5 հազ. դրամի չափով:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի ժգ կետի «Պետական բյուջեի արտարժութային մուտքերի և ծախսերի հաշվարկման համար որպես փոխարժեք սահմանվում է պետական բյուջեի նախագիծը կառավարություն ներկայացնելու օրվան նախորդող օրը Հայաստանի Հանրապետությունում արտարժութային շուկայում ձևավորված համապատասխան արտարժույթների նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին փոխարժեքը»: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում արտարժութային մուտքերի և ծախսերի հաշվարկման համար փոխարժեք է վերցվել մեկ դոլարը 357 դրամ:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում նշվում է, որ արտաքին պետական պարտքը իրականացվել է այդ նույն (մեկ դոլարը՝ 357 դրամ) Օրենքում նախատեսված փոխարժեքով և փաստացի արտաքին վարկերի մարման համար վճարվել է 6,044,825.8 հազ. դրամ (համարժեք՝ 16,938,691.8 ԱՄՆ դոլարին), իսկ տոկոսավճար՝ 3,389,984.4 հազ. դրամ (համարժեք՝ 9,495,754.67 ԱՄՆ դոլարին): Արդյունքում՝ սպասարկումը (մարում և տոկոսավճար) սպասարկման օրվա համապատասխան վարկերի արտարժույթի փոխարժեքով հաշվարկելու դեպքում ստացվում է, որ արտաքին պետական վարկերի մարման համար պետք է վճարվեր 5,886,094,077.99 ՀՀ դրամ, կամ 158,731,769.53 ՀՀ դրամով պակաս, իսկ տոկոսավճարի գումարը՝ 3,221,953,458.45 ՀՀ դրամ, կամ 168,030,958.92 ՀՀ դրամով պակաս: Այսինքն՝ 326,762,728.44 ՀՀ դրամով պակաս: Ստացվում է, որ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում արտաքին վարկերի օգտագործումն ու ստացումը հաշվարկվել է արտաքին վարկերի օգտագործման ու ստացման օրվա՝ տվյալ արտաքին վարկերի համապատասխան արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով, իսկ սպասարկումը և մարումը՝ ֆիքսված փոխարժեքով:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմից արձանագրվելուց հետո Էլ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չի կատարվում: Գործող բոլոր ԾԻԳ-երի հաշիվները մինչ օրս գտնվում են առևտրային բանկերում: Դրա հետևանքով չի պահպանվում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ բյուջեի կատարումը չի իրականացվում միասնական դրամարկղի սկզբունքով:

2007 թվականի ՀՀ պետական պարտքի վերաբերյալ

2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը կազմել է 516.72 մլրդ դրամ կամ 1,696.56 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 16.4% (2005թ.՝ 24.34%, 2006թ.՝ 19.15%))¹, այդ թվում՝ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 75.430 մլրդ դրամ կամ 247.66 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 2.39% (2005թ.՝ 2.29%, 2006թ.՝ 2.66%)) և ՀՀ արտաքին պետական պարտքը՝ 441.291 մլրդ դրամ, կամ 1,448.900 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 14% (2005թ.՝ 22.5%, 2006թ.՝ 16.49%)): 2007 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 85.4%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 14.6%:

2007 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռք բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ թեև Հայաստանի Հանրապետությունը նվազ պարտքի բեռք ունեցող երկիր է, այդուհանդեռձ, մեկ ցուցանիշի արդյունքով այն դասակարգվել է նվազ պարտքի բեռք ունեցող երկրների խմբում:

Արտաքին պետական պարտքի բեռք բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները ըստ դասակարգման խմբերի	ՀՀ ցուցանիշներ							
		2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռք ունեցող երկրներ 80% և ավելի								
	Սիցին պարտքի բեռք ունեցող երկրներ 48%-80%								
	Նվազ պարտքի բեռք ունեցող երկրներ մինչև 48%	28%	28%	28%	26%	21%	14%	11%	9.1%
ԶՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռք ունեցող երկրներ 220% և ավելի								
	Սիցին պարտքի բեռք ունեցող երկրներ 132%-220%								
	Նվազ պարտքի բեռք ունեցող երկրներ մինչև 132%	122%	111%	98%	82%	75%	53%	49.7%	48.2%
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռք ունեցող երկրներ 25.9%								
	Սիցին պարտքի բեռք ունեցող երկրներ 23.45%	11%	10%	10%	16%	10%			
	Նվազ պարտքի բեռք ունեցող երկրներ 7.8%						4.6%	4.2%	3%
Տնկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռք ունեցող երկրներ								

¹ Հաշվարկը կատարվել է ՀՀ դրամով:

	11.65%							
	Սիջին պարտքի թեռ ունեցող երկրներ 9.85%							
	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ 3.6%	3%	4%	3%	1%	1%	0.9%	0.7%
Արտաքին պարտք/Արտա- հանում	Առավել ծանր պարտքի թեռ ունեցող երկրներ 387.95%							
	Սիջին պարտքի թեռ ունեցող երկրներ 209.00%	196%	171%	149%	123%	120%	82%	86%
	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ 64.00%							
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման 50.00%	45%	43%	43%	39%	33%	22%	19%
								14%

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: